Մրցույթ՝«ՀՀ Լոռու մարզի Քարինջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի (17 դասաժամ), ֆիզկուլտուրայի (13 դասաժամ), դասվարի (19 դասաժամ) երաժշտություն (3.5 դասաժամ), տեխնոլոգիայի (2 դասաժամ), կերպարվեստի (5.5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2025 թ. սեպտեմբերի 08-ից մինչեւ 2025թ. *սեպտեմբերի 19-ը* ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. սե*պտեմբերի* 24 -ին՝ժամը 15:00-ին,** ՀՀ Լոռու մարզի Քարինջի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Լոռու մարզ, գ. Քարինջ, 7 փող., շենք 15:

Տեղեկությունների համար զանգահարել 0253-6-04-09, (094) 51-71-66 հեռախոսահամարով: